ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ
ՍԱՀԱԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում, 2023 թվականի դեկտեմբերի 28-ից 2024 թվականի մարտի 28-ը, իրականացրել եմ ներքոգրյալ աշխատանքները.

1. իրավական փորձաքննության եմ ենթարկել Իրավաբանական վարչության կողմից ներկայացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների նախագծեր՝ դրանց վերաբերյալ ներկայացնելով կարծիքներ, այդ թվում՝

1) «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ.

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 134-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2. Մշակել եմ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, այդ թվում՝

1) Հրագործական արտադրատեսակների արտադրության, ներմուծման կամ արտահանման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

2) Հրագործական արտադրատեսակների առևտրի (իրացման), պահեստավորման կամ տեղափոխման (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների I և II դասերի, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն պահեստավորմանը և տեղափոխմանը) լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.